## ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԵՎ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏՈՒՌԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ 45-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ուրախությամբ կհաղորդենք Ձերդ Վեհափառության, որ Սան-Ֆրանցիսկոյի մեր Ս. Հովհաննեսի անվան հայկական նոր եկեղեցիի օծումը տեղի պիտի ունենա 1958 թվականի հունվար 19-ին, որուն համար կխնդրենք Ձեր օրհնությունները: Կաղոթենք Ձերդ Վեհափառության քաջառողջության և երկար կյանքի համար:

ԱՐԹՈՒՆ ՔԱՀԱՆԱ
և ՀԱԿՈԲ ՇԱԲԱՍ (խորհրդի նախագահ)

10 հունվար 1958
ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈ

---

### ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՎՈ ԽՈՐՀՐԴԻՆ

Մեծ Լուսավորչի Աթոռ Էջմիածնեն ողջույն և օրհնություն և լույս Ս. Հովհաննես Ձեր նոր եկեղեցիին, Ձեր նորապսակ առաջնորդին, Ձեր հոգևոր հովվին, եկեղեցական խորհուրդին, տիկնանց, երիտասարդաց միությանց և համայն հավատացյալ սիրեցյալ Մեր ժողովուրդին:

Ձեր նորօծ Ս. Հովհաննես եկեղեցին թող մնա անսասան, շեն և պայծառ՝ իբրև տուն աղոթքի և ուխտի, իբրև աստվածային հովանի և լույսի ջահմարան՝ իբրև հայ հոգիի սիրո և միասնության վեմ՝ ի փառս Ազգիս և Ս. Եկեղեցվույս, ի պարծանս Մայր Աթոռիս:

«Ողջ լերուք, զօրացեալ ի Հոգին Սուրբ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14 հունվար 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ԵՂԻՇԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԹՈՒՃՅԱՆԻՆ

ՎԻԵՆՆԱ

Սրբազնասուրբ և հավիտենական էջմիածնեն սիրո ողջույն և օրհնություն Ձեզ և մեր սիրեցյալ ժողովուրդին՝ Ձեր Ս. Եկեղեցվո հիմնարկության քառասունհինգամյա տարեդարձի առթիվ: Ձեր աղոթքի տունը թող մնա անշարժ, շեն և պայծառ, իբրև աստվածային հովանի և լուսո շտեմարան, իբրև հայ հոգիի սիրո և միասնության վեմ, ի փառս Ազգիս և եկեղեցվո և ի պարծանս Մայր Աթոռիս:

«Ողջ լերուք և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14 հունվար 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հունվարի 19-ին, կիրակի օր, Վիեննայի հայ գաղութը մեծ խանդավառությամբ կատարեց հայկական մատուռին հիմնարկության 45-ամյակը: Հանդիսությանց նախագահեց և պատարագեց Կաթողիկոսական պատվիրակ Սերովբե եպիսկոպոս: Կարդացվեցավ Ձերդ Վեհափառության օրհնության գիրը: Գաղութս այս առթիվ կհայտնե իր որդիական սերը Ձերդ Վեհափառության և իր հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ և ԱՐՄԵՆԱԿ ՎԱՐԴՅԱՆ

20 հունվար 1958
ՎԻԵՆՆԱ